ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03 հունիսի 2019 թվականի N 137-Ա

«ԿԱՊԱՆԻ ԱԼ.ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և 19-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով և 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով «Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Ա.Գաբրիելյանի, Սյունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դավթյանի զեկուցագրերը՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնակատար Տ. Իվանյանին՝

1) սույն թվականի հունիսի 03-ից մինչև 07-ը «Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել աուդիտորական ուսումնասիրություններ.

2) աուդիտորական ուսումնասիրությունների ավարտից հետո, հնգօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. Աուդիտորական ուսումնասիրություններում, որպես փորձագետներ, ներգրավել մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մշակույթի և սպորտի բաժնի պետ Անուշ Սիմոնյանին, իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Դավթյանին և փորձագետ Կարինե Օվչյանին:

3. Ա.Սիմոնյանին. Ա.Դավթյանին և Կ. Օվչյանին՝ աուդիտորական ուսումնասիրությունների ավարտից հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել փորձագիտական եզրակացություն (հաշվետվություն) կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

03.06.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Подписано· POGHOSYAN HUNAN 4005640117